# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ No.1

## «Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցում»

## ԱՄՄ / NCB №A-07LR մրցութային փաթեթի

**Երկիրը**՝ Հայաստանի Հանրապետություն

**Պատվիրատուն**՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

**Ծրագիրը**՝ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր

**Վարկը**՝ № 3284-ARM (ԱԶԲ)

**Ամսաթիվը**՝ 5 դեկտեմբերի 2016թ.

Հարգելի Հայտատու,

Սույնով ցանկանում ենք Ձեզ տեղեկացել, որ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր թիվ 3284-ARM (ԱԶԲ) վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող **«Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի կառուցում» ԱՄՄ/NCB թիվ A-07LR մրցութային փաստաթղթերում փոփոխվել է վերոնշյալ մրցութային փաթեթի II բաժին՝ Մրցութային տվյալների աղյուսակ (ՄՏԱ)՝ Գ. Մրցութային առաջարկների պատրաստում՝ ՀՄՄ 14.5** կետը հետևյալ կերպ՝

<table>
<tr>
<td>ՀՄՄ 14.5</td>
<td>
Պայմանագրի գինը ենթակա է ճշգրտման ՊԸՊ 45 կետի համաձայն հետևյալ կերպ՝
Պայմանագրի գինը պետք է ճշգրտվի պայմանագրի կատարման ընթացքում պայմանագրի գնի միայն այն մասով, որը իրենից կներկայացնի շինարարության մեկնարկի օրվանից սկսած 18-րդ ամսից հետո Կապալառուի կողմից կատարած շինարարական աշխատանքների գինը: Ավելի հստակ ասած. Կապալառուի կողմից մեկնարկի օրվանից մինչև 18-րդ ամիս բոլոր կատարած աշխատանքների գինը ենթակա չէ որևէ ճշգրտման:
Աղյուսակ 1<br>Գների ճշգրտման տվյալների աղյուսակ
<table>
<tr><th>Ինդեքսի կոդը</th><th>Ինդեքսի նկարագիրը</th><th>Ինդեքսի աղբյուրը</th><th>Բազային արժեքը և ամսաթիվը</th><th>Մաս ակցի առաջար վող մասնաբաժինը</th></tr>
<tr><td>—</td><td>Չճշգրտվող</td><td>—</td><td>—</td><td>$A_c$*՝ 0.35</td></tr>
</table>
</td>
</tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| Io | Ամրան: A500 C, AIII-Ф=8մմ | ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակվող ՀՀ պետական կարիքների համար շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների ինֆորմացիոն տեղեկագիր | Արտադրամիջոցի գերակշռող ինդեքսները Մրցութային առաջարկների բացումից 28 օր առաջվա դրությամբ | $B_c$*՝ 0.35-0.45 |
| Mo | Ծանր բետոն B 25 դասի | ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրատարակվող ՀՀ պետական կարիքների համար շինարարական նյութերի, կոնստրուկցիաների և պատրաստվածքների կողմնորոշիչ գների ինֆորմացիոն տեղեկագիր | Արտադրամիջոցի գերակշռող ինդեքսները Մրցութային առաջարկների բացումից 28 օր առաջվա դրությամբ | $C_c$*՝ 0.20-0.30 |
| | | | Ընդամենը | 1.00 |

Ճշգրտումը կկատարվի հետևյալ բանաձևով՝

$P_c = A_c + B_c*Im/Io + C_c*Mm/Mo$

*Որտեղ*՝

- *Pc-ն վճարման ենթակա Պայմանագրի գումարի ճշգրտման գործակիցն է: Ac-ն ներկայացնում է վճարվելիք գումարի չճշգրտվող մասը, իսկ Bc-ն և Cc-ն՝ճշգրտվող մասը (ՀՀ դրամով):*

| | |
|---|---|
| | ▪ *Im-ն և Mm-ն ինդեքսի արժեքն է, համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-իկողմից վերջին հրապարակված ինֆորմացիոն տեղեկագրի՝ հաշիվ-ապրանքագրի ներկայացման օրվա դրությամբ (ՀՀ դրամով):*<br>▪ *Io-ն և Mo-ն՝ վճարման ենթակա արտադրամիջոցների գերակայող ինդեքսն է մրցութային առաջարկների բացումից 28 օրառաջ (ՀՀ դրամով):*<br>*(1) 35 տոկոսը չճշգրտվող տարրն է (գործակից $A_c$)*<br>*(2) 65 տոկոսը ճշգրտվող տարրն (գործակից $B_c+C_c$).*<br>*Գործակից $A_c$-ն պետք է լինի պայմանագրի արժեքի 35 տոկոսը: Հայտատուի կողմից ներկայացված գործակից $B_c+C_c$-ն պետք է լինի աղյուսակում նշված սահմաններում: Համապատասխանաբար՝ $A_c+B_c+C_c$-ն պետք է հավասար լինի 1-ի և բանաձևը կդառնա հետևյալը.*<br>***P (ճշգրտման գործոն) = $0.35+ B_c*Im/Io+ C_c*Mm/Mo$***<br>** Ac-ն Պատվիրատուի կողմից ներկայացվող չճշգրտվող և ամրագրվող գործակից է Մրցույթի մասնակիցը պետք է լրացնի իր կողմից առաջարկվող կշիռները՝ Bc-ն և Cc-ն:*<br>*Շեղ տառերով գրված տեքստը բերված է որպես ուղեցույց, և մրցույթի մասնակիցը պետք է ջնջի այն:* |

Հարգանքներով,

Արեգ Եղիյան

ՀՏԶՀ-ի գնումների մասնագետ